Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/17913/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 հուլիսի 2023 թվականի ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով հայցվոր «Մովսեսյան» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Մովսեսյան» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության տնօրենի 30.06.2023թ" 28-379 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին և ՀՀ ֆինանսների նախարարի տեղեկալ Ա. Ավանեսյանին ներկայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Մ. Տաշչյանին:

Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով դատավորին է հանձնվել 25.07.2023 թվականին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի [illegible]-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ [illegible] հիմքերը:

Միաժամանակ,ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը [illegible] հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի [illegible] որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ [illegible] օրացուցային օրով:

Տվյալ դեպքում, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/17913/02/23 քաղաքացիական գործով պետք է նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.9-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մովսեսյան» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության տնօրենի 30.06.2023թ" 28-379 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին և ՀՀ

ահանների նախարարի տեղեկալ Ա. Ավանեսյանին ներկայացված որոշումն անվավեր ճանաչելու մասին, ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/17913/02/23 քաղաքացիական գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 24.08.2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆ**